

ՄԵՆՔ ԳՆԱՑԻՆՔ ԵՐԿԻՐ

ԼԵԽՈՆ ՄԻԹԻԶԱՆԵԱՆ

Երբ Արրահամն ի վերուստ հրաման ստացաւ գաղթի ու տարագրութեան, գիտէր, որ ինքն ու իր թոռները դատապարտուած են հանգչելու օտար հողում: Եհովան ասել էր, թէ մի օտար երկրում նրա սերունդները պիտի չարչարուեն չորս հարիւր տարի, մինչեւ որ հասնի Աւետեաց Երկրին արժանանալու ժամանակը:

Եհովան գիտէր, որ մեր պապերի ու ծնողների սիրով չի դիմանայ, ուստի նրանց չասաց, թէ երկիրը քանի տարով են թողնում: Եւ նրանք՝ մեր ծնողներն ու պապերը բառացիօրէն ապրեցին վաղուայ վերադարձի յոյսով: Նրանցից շատերը չկան արդէն, մինչդեռ յոյսը, կարօտի ու մրմուսի հետ, մնում է նրանց զաւակների ու թոռների սրտում:

Օգոստոսի վերջերին Երկրից վերադարձաւ զրօսաշրջիկների առաջին խումբը: Հայրենակիցների խանդավառ պատմութիւններից մեր գլուխը պտոյտ էր գալիս: Շնորհակալ ենք Արտասահմանեան տուրիզմի վարչութեանն ու ՕՎԻԲ-ին, ընդառաջեցին, եւ կազմաւորուեց Հայաստանի «Վասպուրական» Միութեան ուժագնացների խումբը:

Նոյեմբեր 5-ի վաղ առաւտեան խումբն արդէն Աշտարակի խճուղով սլանում էր դէպի Կումայրի-Ախուրեան, դէպի պետական սահմանը: Ագարակում մի քանի րոպէով կանգ առանք «Արծիւ Վասպուրական»ի յուշակոթողի մօտ, որտեղից խորհրդանշականօրէն սկսւում էր ուխտագնացութիւնը:

Կումայրիի կայարանում մեզ ընդունեցին յուզմունքով.

— էս իրիկվան Կարս կեղնիք... Երանի ձեր աչքերին...

Մենք էլ էինք ենթադրում երեկոյեան արդէն Կարսում լինել, բայց... մեզ վիճակուած չէր հարթ ու հանգիստ երկաթուղարին ճանապարհորդութիւն:

Սահմանն անցանք ուշ երեկոյեան, որովհետեւ մի քանի ժամ կորաւ իրերը բեռնատար վագոնից հանելու վրայ, մի հասրակ գործողութիւն, որ կատարւում է սահմանամերձ թուրքական կայարանում: Կառամատոյցի մի կողմում կանգնում է Հայկական գնացքը, միւս կողմում՝ թուրքականը: Կառամատոյցը նեղ է: Ասեղ գցելու տեղ չկայ: Ոչ մի լուսաւորութիւն:

թեռնատարի երախից մի քանի տղամարդ լուցկու լոյսով դուրս են հանում մեծ ու փոքր ճամպրուկներ՝ գոռալով.

— իս ո՞ւմն ա, ժողովո՛ւրդ...

Մենք 31-ս էլ առաջին անգամ ենք այստեղ եւ նման բան չինք սպասում:

— Մեղքը մե՛րն է, — տրտունջներն ընդհանրացնում է Սիրիա մեկնող եւ սառը քամուց արդէն հարբուխ վաստակած մի տղամարդ, — վագոնում մի լապտեր չլինէ՞ր...

Թուրքական գնացքն ամէն ինչ գերազանցեց. բոլոր վագոններում՝ համատարած խաւար ու սառնամանիք...

Ճանապարհի կէսին էլ չինք հասել, երբ ամայի մի վայրում գնացքը կանգ առաւ: Քիչ յետոյ երկաթուղային համազգեստով մի բարձրահասակ երիտասարդ յայտնուեց՝ ձեռքի լապտերը աւելի շատ յանցնելով, քան վառելով: Հարցրինք՝ ինչո՞ւ չենք գնում: Պատասխանը եղաւ մէկ բառ՝ Աթեֆ: Թեժ-ը պոկուեց գնում: Պատասխանը եղաւ մէկ բառ՝ Աթեֆ: Թեժ-ը պոկուեց օտարոտի բառից, լուսաւորուեց ուղեղիս մէջ, ու ես բարձրածայն թարգմանեցի՝ հրդե՛հ: Այո՛, էլեկտրաքարշում հրդե՛հ էր ընկել:

Խցիկի ապակեպատ դռան մէջ լուցկի չրթաց՝ ուրուագծելով Գրիգոր Աճեմեանի դէմքը.

— Վանի ճանապարհն անցնում է արգելքների միջով...

Կէս գիշերին մի արգելք էլ սպասում էր մեզ Կարսի «Թեմել» հինգյարկանի հիւրանոցում՝ խափանուած վերելակը:

Վաղ առաւօտեան, երբ մեզ ողջունեց Կարսի անամպ երկրները՝ ժպտերես արեգակով, մեր ամբողջ յոդնութիւնը, դժուարին ճանապարհի հետ կապուած տհաճ յիշողութիւններն անմիջապէս յօդս ցնդեցին:

Հազարամեայ այս քաղաքը ոտից գլուխ պատմական է: Ամէն ինչ տեսել է՝ ե՛ւ Հայոց թագաւորութեան գանձերն ու փառքը, ե՛ւ բիւզանդական դրօշը, ե՛ւ սելջուկների վայրագութիւնները, ե՛ւ Լենկթիմուրի սարսափը, տարբեր դարերում ձեռքից-ձեռք է անցել, երեք անգամ նուաճուել ոուսների կողմից եւ նրանց խաչով էլ... թաղուել: Կարսը մի հազարամեայ իրողութիւն է, որը խորհրդանշում է հայկական պետականութեան հզօրութիւնն ու դժիւմ ճակատագիրը, օտարների անյագուրդ վայրագութիւնը եւ, վերջապէս, ոուսական քաղաքականութեան ապիկարութիւնը:

Առաջին իսկ պահից մեզ ազատ զգացինք: Մարդ ուրիշ ինչ-պէս պիտի զգայ իրեն իր նախնիների հողի վրայ: Մեր առաջին այցելութիւնը տուեցինք Սրբոց Առաքելոց եկեղեցուն: Կանգուն է, փառք Աստուծոյ: Յետոյ բարձրացանք մեր պատմիչների

Եզրուով ասած Կարուց բերդ: Ունենալ այսպիսի բերդ եւ...

Կամրջի մօտերքում Գրիգոր Աճեմեանի հետ փորձեցինք կռահել, թէ մօտաւորապէս որտեղ պիտի ապրած լինի եղիչ Զարենցը: Կռահումը կիսատ թողած, ես ստիպուած էի մեր խմբի ուղեկից, այս ուղեւորութիւնը հնարաւոր դարձրած, հաւեպարնակ բիզնեսմէն Յովսէփ Այվազեանի հետ գնալ քաղաքային ինչ-որ վարչութիւն:

Պարոն Յովսէփը երկրորդ խումբն է տանում Երկիր: Նա քաջատեղեակ է տեղացիների ոչ միայն լեզուին, այլեւ բարքերին ու կարգերին: Տակաւին կայարանում դժգոհեց. «Քեզի ըսի՝ վիդէոքամերա պէտք չէ. կրնայ գլխացաւանք ըլլալ»: Հիմա գնում ենք մեր գլուխն այդ ցաւից ազատելու:

Մեզ ընդունեցին յարգանքով: Նայեցին խմբի բոլոր անդամների անձնագրերը, որ մօտս էին, եւ թոյլտութիւն ստացանք վաղը մեր խումբն Անի տանելու: Ապա Պարոն Յովսէփին ասաց, թէ ես խնդրում եմ, որ ինձ, իբրեւ գրողի եւ լրագրողի, արտօնուի տեսախցիկով նկարահանումներ անել: Աւելացրեց, որ զրօսաշրջիկների խմբի ղեկավարն եմ, խոստանում եմ նկարահանել միայն բնութիւն ու եկեղեցի: Ապա ցոյց տուեց օտար Եզրուներով հրատարակուած գրքերիցս երկուսը, որոնք ես, յամենայնդէպս, վերջին պահին գցել էի պայուսակիս մէջ:

Այս ամէնը քաղաքավարութեամբ լսեցին, ապա ասացին.

— Եթէ կարելի է, գրքերը թողէք մեզ մօտ: Երեկոյեան մեր աշխատակիցը կը գայ ձեր հիւրանոց եւ արդիւնքի մասին կը տեղեկացնի:

Երեկոյեան եկաւ իշխանութեան ներկայացուցիչը.

— Անին ազատ կարող էք նկարահանել, միայն խնդրում ենք օբյեկտիւը զինուորականների եւ զինուորական կէտերի վրայ չպահել:

Այսպէս, երկու գրքով, ես նուաճեցի Անին: Ու հիմա, ամէն Աստուծոյ օր, սենեակս լի է Անիով: Պատերը յետ-յետ են գընում, կապոյտ էկրանը դառնում է անշրջանակ, լցւում արեւով:

31 անհամբեր հայեր երկիւղածօրէն մտնում են Սմբատեան պարիսպների դարպասից ներս: Ու կատարում է մի հրաշք, որ տեսանելի ու լսելի է միայն նրանց: Միլիոն-միլիոն քարաբեկորներ յետ են թռչում իրենց տեղը, ճանապարհները դառնում են սալայատակ, պարիսպները բարձրանում են ու երկարում: Վեհանում են մօտ ու հեռու գմբէթները: Ահաւոր լուսութիւնը մէկէն լցւում է կեանքի ձայներով: Շարունակւում է Անիի մեծաժիսոր առօրեան:

Անցնում ենք Աւագ, ապա՝ Շախմատաձեւ Դոների առջեւով

եւ, մտնելով Գայլաձորի Դոնից, կախւում կիրճի վրայ: Հինգերորդ դարում մեր նախնիք ոչ միայն Աստուածաշունչ են թարգմանել անգերազանց հայերէնով, այլեւ այսպիսի ամրոցներ կերտել: Ամրոցներ, որ պաշտպանական շինութիւն լինելով հանդերձ, ճարտարապետական գլուխգործոցներ են, գեղարևստական շենքերազանցուած ճաշակի արգասիք: Պատահակա՞ն է, որ աշխարհում միայն Անիի պարիսպներն են սրբատաշ: Գետի միւս ափին, ինչքան աչքդ կտրի, ժայռափոր այրեր են՝ գայլաձորցիների համեստ, բայց ապահով կացարանները:

Զանգակատներից երկինք առաքուող փոխասացութիւնները կանչում են մեզ:

Այստեղից ամենամօտիկը Փրկչի եկեղեցին է: Փարուենք նրա իննհարիւրամեայ պատերին, լարենք մեր տեսողութիւնը եւ հիանանք սիւների վրայի Առաքեալների որմնանկարներով: Կամար առ կամար, քանդակ առ քանդակ ըմբովնենք դարերին թողած Բագրատունեաց այս ընծան, որ գին չունի եւ լրիւ կանգուն էր մինչեւ 1958-ի գարունը: Գմբէթի նրբագեղ կամարաշրերից մէկի մէջ մի բարձրաքանդակ աղաւնի է: Անշուշտ, Սուրբ Հոգու նշանն է: Բայց գուցէ նաեւ հաւատարմութեա՞ն նշան: Այն հաւատարմութեան, որով մեր հանճարեղ նախնիք նուիրուած էին արուեստի յարատեւութեան գաղափարին:

Անիի եկեղեցիներով այսօր մի անսովոր թափօր է անցնում: Ամենայն Հայոց մայրաքաղաքից ժամանած 31 պապակ հայեր պիտի մոմ վառեն, խունկ ծխեն, կոմիտաս երգեն: Ահա, քարայծերի ինքնավստահութեամբ, նրանք նետում են դէպի Ախուրեանը զառիթափուող քարափն ի վար: Այստեղ, մի աստւածատուր դարաւանդի վրայ, բարձրանում է Տիգրան Հոնենցի Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին: Մոմերով պայծառացող նրա կամարների ներքոյ դիտում ենք գմբէթի ներսն ու եկեղեցու բոլոր պատերը զարդարող հրաշագեղ որմնանկարները, միաժամանակ լսելով քարոզչին, որ պրոֆեսոր Վարազդատ Յարութիւնեանն է.

— Այս եկեղեցին կառուցել է տուել Անիի մեծահարուստներից մէկը՝ Տիգրան Հոնենցը 13-րդ դարում, Զաքարեանների օրոք, երբ Անին հարստացաւ հոգեւոր եւ աշխարհիկ նոր արժէքներով...

Յետոյ թափորը ձգւում է ձորն ի վեր:

Ո՞վ մեծասքանչ Մայր Տաճար: Հանդիպակաց ափից ես քեզ տեսել եմ երեսունհինգ տարի առաջ: Նայում էինք հեռադիտակով, ճգնում որսալ սրբազան պատերիդ իւրաքանչիւր մասունկով: Յիշում եմ, բարեկամս՝ տոհմիկ վանեցի Միքայէլ Պարութիւնեանն է:

Նիկեանի որդի Սեպուհը, որ քո գիտակն ու երկրպագուն էր, անընդհատ կրկնում էր.

— Մենք անպայման կը տեսնենք Անին... Անպայման կը տեսնենք...

Այս մի պտղունց խունկն էլ, որ ահա զցում եմ սեղանիդ վառուող կրակին (մեզ ների՞ր, որ բուրփառ չկայ, խնկանց չկայ), թող ծխայ իմ վաղամեռիկ բարեկամի հոգու հանգստութեան համար:

Իսկ հիմա ունկնդրենք նաեւ երգեցողութեա'ն պրոֆեսոր Վարագդատ Յարութիւնեանին: Ո՞վ ասաց, թէ Կոմիտասի «Ծիրանի ծառ»ը նաեւ Անիի մասին չէ: Ուրիշ էլ որտե՞ղ կարող են առաւել խորախորհուրդ հնչել այս տողերը.

Ամէն մէջըդ ման գալիս
Ցաւերըս իրար մի' տայ:

Անին ամբողջութեամբ երաժշտութիւն է: Անին անպատմելի է: Անին պէտք է զգալ, ինչպէս զգում ես «Ծիրանի ծառ»ի վեհ տրտմութիւնը: Անիի ցաւերին մի ցաւ էլ է աւելացել՝ Մայր Տաճարում լայնչի մի ճաք 1988-ի երկրաշարժից...

Տրդատ ճարտարապետը նոր-նոր էր սկսում Մայր Տաճարի հրաշակերտումը, երբ նրան հրաւիրեցին Կոստանդնուպոլիս՝ վերակառուցելու Սուրբ Սոֆիայի արեւմտեան մասն ու գմբէթը, որ երկրաշարժից փլուել էին: Տրդատը վերադարձաւ յաղթանակած եւ մարմին տուեց իր երազին...

Ե՞րբ է վերադառնալու մերօրեայ Տրդատը: Եւ քանի՞ Տըրդատ է պէտք Անիին: Բայց նախ Գագիկ թագաւոր է պէտք ու Կատրանիդէ թագուհի:

... Մանուչի մզկիթի պատուհանից ամբողջ խորութեամբ երեւում է Ախուրեանով թրատուած կիրճը: Լինէր եւս գէթ մէկ ժամ, կ'իջնէինք խունկ ծխելու նաեւ ահա այնտեղ, առափնեայ ժայռին թառած Կուսանաց վանքում: Այնտեղից կ'իջնէինք գետափ, ոտք կը դնէինք քաղաքի ամենամեծ՝ եռաչքանի կամրջի վրայ ու կ'ասէինք.

— Եթէ այս կամուրջը կար, ինչո՞ւ եկանք հեռաւոր ու տանձալի ուղիներով...

Փառք Ամենակալին, առջեւում դեռ քայլելու ճանապարհ կայ: Դեռ մենք պիտի ժայռերի կատարներից դիտենք աշխարհի հնագոյն ստորգետնեայ արուարձան-քաղաքը, որ տարածում է Շաղկոցածորից մինչ իգածոր: Ժայռափոր եկեղեցիներ, ժայռափոր ճանապարհներ, ժայռափոր դամբարաններ... Մի ամբողջ ստորգետնեայ աշխարհ Հայոց: Անիի վարպետներն ապա-

ցուցել են, որ քաղաք կոչուածը կարող է կատարեալ լինել նաեւ գետնի տակ: Բնութիւնը եղել է մայր բարեաց, եւ իրենք իմացել են բնութեան արժէքը:

Ցիշատակդ օրհնեալ է, Պահաւունեաց Արուղամը իշխանի որդի Գրիգոր: Քո կառուցած Սուրբ Գրիգոր եկեղեցին մեզ յայտնւում է տեսիլքի նման: Մենք որդիաբար գուրգուրում ենք նրա մամուտ պատերը, որոնց վրայ վաղուց մոմ չէր կաթել...

Վերջին մոմերը վառուեցին Գագկաշէնի Գրիգոր Լուսաւորչի տաճարում: Ու յետոյ 31 ուխտաւորներ յոգնաբեկ, սրտաբեկ քայլեցին դէպի Սմբատեան պարիսպների դարպասը:

Ես վերջինը թողեցի Անին: Անյագօրէն նկարում էի: Տեսախցիկը մի անգամ էլ շրջադարձ կատարեց: Հեռուից Գագկաշէնի եկեղեցին թւում էր ափ նետուած հսկայական մի նաւ...

Աւարտուեց աւելի քան չորսժամեայ հրաշքը, եւ միլիոնմիլիոն քարեր նորից պոկուեցին պարիսպներից, գմբէթներից, պատերից, պոկուեցին ու շաղ եկան, կիտուեցին իրար գլխի: Անին լցուեց ահաւոր լոռութեամբ... Ու ես լաց եղայ ի վերայ աւերակաց...

... Կարսը շրջանցելով՝ աւտոբուսը շուտով յայտնւում է Արաքսի ափով ձգուող ճանապարհին: Երկար ժամանակ չենք կարողանում սթափուել Անիի մորմոքից: Մեզ սփոփում է այն միտք միայն, թէ ժամեր յետոյ հասնելու ենք Վան:

Սարիղամիշը մեզ դիմաւորում է արեւամուտի վերջին շողերով ողող զօրանոցներով, աւտոմատաւոր զինուորների շարքերով, մեզ համար արդէն սովորական դարձած փոքրիկ, բայց լի խանութներով ու կրապակներով: Մի քանի ըոպէ կանգնում ենք մօտակայ հիւրանոցի առջեւ, որոշելու՝ մնո՞ւմ ենք գիշերելու, թէ՛ գիշերով շարունակում ենք ճանապարհը: Օդը սառն էր, շրջապատը՝ օդից աւելի: Որոշեցինք ու շարժուեցինք առաջ:

Ուշ երեկոյեան հասանք Խորասան (չշփոթել իրանի Խորասանի հետ):

Իջնում ենք ոչ այն է ճաշելու, ոչ այն է ընթրելու: Տեղացիք իսկոյն կալմէջ են անում յաղթահասակ, երկարաբեղ Մնացական Սիանոսեանին, որը նրանց ողջունում է ե՛ւ թուրքերէն, ե՛ւ քրդերէն՝ իրեն իր տարերքի մէջ զգալով:

— Հա՛յ էք... Հայաստանի՛ց... Բարո՛վ էք եկել, բարո՛վ էք եկել...

Մտերմիկ խորտկարանը տրամադրեց նստել աւելի երկար, քան ենթադրում էինք: Աւտոբուս բարձրացանք բարձր տրամադրութեամբ: Շուտով մեքենան լցուեց երգով, պարով, զուարձախօսութիւններով:

ինձ, որ նստած եմ առջեւում եւ աւելի յարմար եմ տեսնում մայթեզրեայ ազդատախտակները, շարունակ հարցնում են.

— Ինչքա՞ն է մնում:

Վերջապէս երեւում է լատինատառ Van-ը, դիմացը՝ 110: — Ուոա՛, մինչեւ Վան մնում է 110 կիլոմետր:

Աւտոբուսը կանգ է առնում Արճէշի բննդակայանում: Արդէն Վանայ ծովի հիւսիսային ափին ենք: Ճանապարհը շարունակելուց յետոյ, աջ կողմում մենք աւելի շուտ գցում, քան նշմարում ենք ծովը: Վահրեղդինը (երիտասարդ, սեւաբեղ, ուշիմ մեր վարորդը) մեքենան կանգնեցնում է թէ չէ, դուրս ենք թափում ու բարձրադիր ափից մեզ գցում ցած՝ վայրկեան առաջ ողջագուրուելու մեր ծովի հետ:

Կարկամել ենք, չգիտենք ինչ ենք անում: Ջուրն արդէն թրջում է մեր ոտքերը, մենք համբուրում ենք պաղպաջուն կոհակները, խմում ենք ու չենք էլ գցում, որ աղի է: Այս ծովի ջուրն աշխարհի ամենահաճելի օշարակն է մեզ համար: Մեռնի պէս քսում ենք մեր դէմքին, մեր հերթին հայրենի ծովն օծելով արցունքներով... Ու կէսգիշերային լոռութեան մէջ թնդում է 31-ի վանկերգը.

— Վա՛-նա՛յ ծո՛վ... Վա՛-նա՛յ ծո՛վ...

Յայտնում են խմիչք ու գաւաթներ:

— Կենա՛ցդ, Վանա՛յ ծով...

Մեր դիմաց ծովի արծաթաւուն հարթութիւնն է, իսկ մեր գլխավերեւում մի անպատմելի գոհարազարդ երկինք: Ոչ մի տեղ ու երբեք չեմ տեսել այդպիսի խոշոր աստղեր, ոչ մի տեղ ու երբեք չեմ տեսել ամբողջական Ծիր Կաթինը՝ ձգուած հորիզոնից հորիզոն:

31 երանելի հայեր բարձրանում են մեքենայ: Ժորես Մկըրտչեանը շարունակում է կրկնել.

— Հրաշքներ լինում են...

Այդ գիշեր Վանի բնակչութեան թիւը դարձաւ 173 հազար 31: Վերջին 31-ը խենթեր էին, երկրագնդի ամենաերջանիկ ու ամենաթերահաւատ մարդիկ: Նրանք անվերջ հարցնում էին իրենք իրենց ու միմեանց.

— Իրօ՞ք սա երազ չէ...

Այս տողերը գրելիս, երբ այդ ըոսէներն արդէն յիշողութիւն են եւ շարունակում են երազ թուալ, ծիծաղով եմ վերյիշում, որ արդիական շինութիւններով մեզ ներկայացած առաջին իսկ փողոցում, ուր մեքենան կանգ առաւ, մենք որոշեցինք ու պնդեցինք.

— Այո՛, սա իսաշփողանն է, որ կայ...

Լուսացաւ Վանի առաջին առաւտուր:

Արեւը չծագած՝ արդէն թափառում էինք մեր՝ «Շահին» հիւրանոցի շրջակայքում: Մեր հիւրանոցի ղիմացի մայթին բուժարան է, նրանից դէպի աջ, խաչմերուկի խորքում՝ «Մեծ Ռուբառու» հիւրանոցը: Մեր մայթին մթերային խանութներ են, «Գեղեցկուհի Փարիզ» հիւրանոցը, իսկ փողոցի վերջում, աջի վրայ՝ փոստային ծառայութիւնների շէնքը:

Արեւը նոր էր բարձրանում անրիծ երկնակամարով, երբ մենք արդէն մագլցում էինք Վանի հինգհազարամետ պատմութիւնը վկայող միջնաբերդի ժայռերով: Բառացիօրէն մեր հայեցքի դէմ յանդիման

Արեւ դիպաւ Սիփան սարին:

Միջնաբերդի վրայ ես մտովին որոնում էի այն դրօշը, որ բարձրացրին վանեցիք 1915-ի Մայիսի 4-ին: Գուցէ հենց այստեղ, բերդի առջեւի տափարակում էր, որ Քաղաքամիջի եւ Այգեստանի կորիճները կատարեցին Ապրիլեան հերոսամարտի յաղթահանդէսը: Մի պահ թւում է, թէ պիտի լսուի Վանի նշանաւոր ֆանֆառի ցնծագին նուագը: Աչքս ընկնում է մեկուսի կանգնած, ծոցատետրում նշումներ անող Մանիկ Բախչինեանին: Համոզուած եմ, որ նա էլ այդ պահին լսում էր ֆանֆառի ձայները, այն նուագախմբի, որի խանդավառ ոգին էր նրա հայրը՝ Մարգար Փախչոյեանը:

Իմ որոնածի փոխարէն, միջնաբերդին յայտնւում է մի փոքրիկ մզկիթ: Պիտի ենթադրել, որ դա էլ է «ուրարտական», քանի որ միջնաբերդը, ինչպէս նաև Վանի աւազանի բոլոր հնութիւնները այստեղ վերագրում են ուրարտացիներին եւ միայն նրանց: Ինչպէս նշուած է տարբեր լեզուներով շքեղօրէն տպագրուած գովազդային գրքոյկներում, «ուրարտացիներն ապրել են Անատոլիայի արեւելքում Նախքան Քրիստոսը 1000 թուին»:

Թէ ովքեր են ուրարտացիները, պիտի իմանայինք երկու օր յետոյ, «Մեծ Ուրարտու» հիւրանոցի աշխատողներից: Դիտելով հիւրանոցի սրահները զարդարած «ուրարտական» պեղածոյ նիւթերի մեծաղիր, գունաւոր լուսանկարներն ու դրուագումները, ժորես Մկրտչեանն իր վարժ թուրքերէնով հարցրեց.

— Ովքե՞ր են այդ ուրարտացիք, որոնց արուեստն այսպէս արժանացել է ձեր ուշադրութեանը:

Պատասխանեցին առանց այլեւայլութեան.

— Մենք եւ դուք՝ հայերդ, ուրարտացիներ ենք:

31-ը ցրուեցին միջնաբերդով մէկ, հակառակ պրոֆեսոր Ցարութիւնեանի յորդորներին. «Ինձանից մի՛ հեռացէք, որ լոէք

իմ բացատրութիւնները»: Բերդի ամենաբարձր ժայռի կատարին առաջինը յայտնուեցին Մագդա Յակոբեանը, Ժաննա Աղաբարեանը, Մարգարիտ և Ռաֆիկ Յովհաննիսեանները: Շատ չանցած հեռւում երեւաց մի ուղղաթիռ, որ եկաւ, եկաւ ու գրեթէ միջնաբերդի գլխին քսուելով, անցաւ: Յատուկ ուղղաթիռ էր: Բնական է, որ հետաքրքրուեց, թէ այս ի՞նչ խումբ էր, որ առաւոտ կանուխ եւ այդպէս արագ նուաճեց միջնաբերդը:

Մեկնելուց առաջ կուշտ-կուշտ խմում ենք միջնաբերդի տակի աղբիւրից, որի ջուրն անմահական է: Ես մինչեւ ծնկներս մտնում եմ այդ աղբիւրից գոյացող զրնգուն առուակի մէջ ու բոլորովին չեմ զգում, որ ձմեռնամուտ է:

... Այդօր, մեր այցելութեան ժամին Աւանցում կառանած նաւեր չկային: Բայց նաւահանգստի բանուկ լինելը պարզ զգացւում էր մանաւանդ նաւամատոյցի ընդարձակութիւնից եւ դէպի ծովը միտող փարոսակիր հրուանդանի երկարութիւնից: Աւանցը պատմական Հայաստանի հնագոյն աւաններից է եղել: Դարասկզբին չուրջ երկու հազար բնակիչ է ունեցել: Հիմա, պարզապէս, Վանի միակ նաւահանգիստն է: Մեզ չվիճակուեց տեսնել, թէ ինչպէս «գեամին եկաւ Վանայ ծովից», բայց, փոխարէնը, Աւանցում ականատես եղանք ըստ ամենայնի յուզի մի արարողութեան:

Նոյնափիսի հանդիսաւորութեամբ, ինչպէս որ մեր հոգեւորականները Սուրբ Մեռոնն են կաթիլ-կաթիլ թափում մկըրտուողի աւազանի մէջ, Ժորես Մկրտչեանը Սեւանայ լից մի մեծ շնով իր հետ բերած ջուրը լցրեց Վանայ ծովը: Թնդացին ծափերը: Կապոյտ կոհակներն ուրախ-ուրախ վազեցին լուրտանելու ծագէ-ծագ:

... Վան-Վասպուրականի հոգեւոր ամրոցը Վարագավանքըն է:

«Մենք պանդուխտ ենք, էս տեղերին ծանօթ չենք», Վահրեղդինն էլ երբեք առիթ չի ունեցել զբօսաշրջիկներ տանելու Վարագ: Ուղեցոյցի կամ ուղեկցողի կարիք կայ:

— Մեքենան պահէք, ես հիմա մի «լեզու» կը բերեմ, — եւ Ժիրայր Ասլաննեանը ընդհանուր ծիծաղի տակ, քիչ յետոյ յայտնուում է մի պատրաստակամ պատանու հետ:

— Կարո՞ղ ես մեզ հետ գալ Վարագ, — հարցնում է Սիանոսեանը:

— Այս:

— Հարցըու, թէ ո՞ր գիւղի մօտով է անցնում ճանապարհը՝ նախքան Վարագ հասնելը, — հարկ է համարում ստուգել պրոֆեսոր Յարութիւնեան:

— Շուշանց գիւղի մօտով, — պատասխանում է պատանին,
եւ այլեւս տարակոյս չի մնում:

Մեր «Մերսեղես» աւտորուսը դանդաղ անցնում է քաղաքի
«տոհմիկ» թաղերով, ուր միայն բնակելի տներ ու տնակներ
և՝ թէ՛ չին, թէ՛ նորացրած, թէ՛ նոր: Բոլորն էլ՝ փոքր կամ
մեծ պարտէզներով: Ապա դուրս ենք գալիս Այգեստանի սահ-
մաններից եւ բռնում դէսի Վարագայ բարձունքները տանող
խճուղին: Եթէ երազ չէ, ուրեմն հաւատանք, որ մեր դիմաց
Վարագայ լեռնաշղթան է, որ գնալով մօտենում է՝ մեզնից ոչ
պակաս անհամբեր: Մեր ձախ կողմում տարածուող դաշտերի
հեռում, սարերի մէջ ծուարած, մի գիւղ է երեւում:

— Շուշանցն է, — ասում է ուղեկցող պատանին:

— Շուշանցը երկու սարի մէջ սեղմուած չէր, ահա այս
դաշտերի տեղում էր եւ՝ բաւականին ընդարձակ: Մեծ էլ եկե-
ղեցի ունէր, — եւ պրոֆեսորը տարակուսանքով օրօրում է գը-
լուխը:

Ճամբեզրով գնացող մի մարդ ձեռք բարձրացրեց: Վերց-
րինք: Ցիսունին մօտ, սեւ աչքերով քուրդ էր Մուհամմէդը: Նա
հաստատեց գիւղի Շուշանց անունը եւ համաձայնեց մեզ ուղեկ-
ցել մինչեւ Վարագավանք, չնայած որ իրենց տունն աւելի մօտ է:

«Մերսեղես»ը բարձրացաւ ոլորան ոլորանի յետեւից ու ոսկի
հագած բարդիների տակ անշարժացաւ: Հիմա ես կը տեսնեմ
Վարագավանքի համբաւաւոր գմբէթները, վանքի երկյարկ,
երկարածիգ հիւրատունը եւ հսկայական հրապարակը, որտեղ
մեր խումբը, մէկ էլ տեսար, «Փոռկա, Փոռկա» պարեց հին-հին
բարի ժամանակների ուխտաւորների նման:

Գմբէթնե՞ր: Հիւրատո՞ւն: Հրապարա՞կ...

Գմբէթը կորցրած Ս. Նշանի եւ նրա գաւկիթ, իր հերթին
իբրեւ եկեղեցի ծառայած Ս. Գէորգի մնացորդացը միայն...

Բնաւ երբեք հրապարակ չյիշեցնող ցեխապատ բակի աջ կող-
մում, նախկին հիւրատան տարածքում, փողոց է՝ պարզունակ
տներով: Վանքի նախասրահի դրսի խորշերում ընկած են կալսիչ
մեքենայի մասեր: Բակի ձախ կողմում՝ մէկ եւ երկու յարկանի
անարուեստ տներ ու տնակներ: Բնակիչները՝ առչկան մանող,
զլուխ, քիթ ու բերան ծածկած քուրդ կանայք, շիկահեր, խա-
ժակն աղջիկներ, անլուայ երեսով սիրունիկ երեխաներ, մէկէն
լցում են բակ՝ ակնապիշ մեզ դիտելով: Վերարկուն ուսը գցած
մի տղամարդ ու մի քանի ջահելներ գլխի շարժումով, անխօս
առնում են մեր ողջոյնը եւ շտապում մեզ հետ մտնել վանքի
եռակամար նախասրահի անդուռ մուտքից ներս, կարծես թէ
իրենք էլ ամէն ինչ առաջին անգամ են տեսնելու:

(Ծար.)